**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 15.04.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/79

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցում, շշալցված խմելու ջրի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4046-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

# ՊԱՐԶԵՑ

## 1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.03.2020թ. թիվ 01/61-5024 գրության հիման վրա, 16.03.2020թ.-ին «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.03.2020թ.-ին:

17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/63 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին ու 15.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2020թ.-ին:

## 2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 12.03.2020թ. թիվ 01/61-5024 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

*«Երևանի քաղաքապետարանի և ԱՁ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:*

*Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020 թվականին կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:*

*Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները 10-րդ չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը 20.02.2020 թվականի հ. 24/1-10/3305ել և 27.02.2020 թվականի հ. 24/1-10/3882ել գրություններով դիմել է Ձեզ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն ԱՁ Արտուշ Խաչատրյանի կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:*

*Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ Արտուշ Խաչատրյանը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի՝ 10-րդ չափաբաժնի մասով, հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար*

*համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

*Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ ԱՁ Արտուշ Խաչատրյանի նկատմամբ կիրառել Օրենքի 50- րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:*

**3. <u>«Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4046-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

**4. <u>ՍՑ-LO-2020/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 10 չափաբաժնի համար սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Մասնավորապես՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12:00:

Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները 10-րդ չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը 20.02.2020 թվականի հ. 24/1-10/3305ել և 27.02.2020 թվականի հ. 24/1-10/3882ել գրություններով դիմել է Մասնակցին տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն վերջինիս կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

www.gnumner.am համացանցային կայքում 12.03.2020թ.-ին հրապարակվել է Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման պայմանագիրը թիվ 10 չափաբաժնի մասով միակողմանի լուծելու մասին ծանուցում՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (խախտվել են մատակարարման ժամկետները՝ 5 օրի ավել):

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4046-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ

նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 10 չափաբաժնի համար սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Մասնավորապես՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12:00:

Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները 10-րդ չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը 20.02.2020 թվականի հ. 24/1-10/3305ել և 27.02.2020 թվականի հ. 24/1-10/3882ել գրություններով դիմել է Մասնակցին տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն վերջինիս կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

www.gnumner.am համացանցային կայքում 12.03.2020թ.-ին հրապարակվել է Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման պայմանագիրը թիվ 10 չափաբաժնի մասով միակողմանի լուծելու մասին ծանուցում՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (խախտվել են մատակարարման ժամկետները՝ 5 օրի ավել):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 12.03.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 12.03.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն հրաժարվել է Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով գնման պայմանագրի կատարումից, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4046-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/79 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**